ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

02 ՕԳՈՍՏՈՍԻ 2021թվականի N 70-Ա

ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35 -րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 37-րդ հոդվածով, ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման 29-րդ կետի գ) ենթակետով, հիմք ընդունելով ՀՀ կադաստրի կոմիտեի 01/12/2020թ. որոշումը և Թումանյան քաղաքի բնակչուհի Լյուդմիլա Վաղարշակի Մխիթարյանի դիմումը՝

որոշում եմ.

1.Հանգուցյալ Վանիչկա Սմբատի Մխիթարյանին սեփականության իրավունքով պատկանող Թումանյան բանավանի,2-րդ թաղամասի,6-րդ փողոցի,3 շենքի,16 բնակարանին՝ մակերեսի չափը՝ 64,8 քմ տրամադրել նոր փոստային (ՀՀ Լոռու մարզ,Թումանյան համայնք,Թումանյան քաղաք,6-րդ փողոց, շ.15,բն. 16) հասցե:

2.Սույն որոշման 1-ին կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

3.Ուժը կորցրած ճանաչել Թումանյան համայնքի ղեկավարի 2020 թվականի դեկտեմբերի 3-ի <<Փոստային հասցե տրամադրելու մասին>>N 120-Ա որոշումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ՝ ՏԻԳՐԱՆ ՄԽԻԹԱՐՅԱՆ

2021թ. օգոստոսի 02
ք.Թումանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

03 ՕԳՈՍՏՈՍԻ 2021թվականի N 71-Ա

ԹՈՒՄԱՆՅԱՆՔԱՂԱՔԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՓՈՂՈՑ, ԹԻՎ 4 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՌԱՖՖԻ ՌԱԶՄԻԳ ՊԵՏՐՈՍԻ ՔՈՋՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԲԱՂՆԻՔՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՁԵՎԱՓՈԽՈՒՄՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՇԻՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Ռաֆֆի Ռազմիգ Պետրոսի Քոջյանի դիմումը՝ անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման N 07112019-06-0064 վկայականը, համապատասխան որակավորում ունեցող Սամվել Ռուբենի Նիազյանի կողմից չափագրված հողամասի և շինությունների հատակագծը, շինությունների բնութագիրը,27.07.2021թ.<<ԱԿԱ-ԳՐԱՆԻՏ>>ՍՊԸ-ի կողմից տրված մասնագիտական եզրակացությունը,ղեկավարվելով ՀՀ կառավարության 2002 թ. փետրվարի 02-ի թիվ 88-Ն որոշումով,ՀՀ կառավարության 2006 թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 8.1-րդ ,9-րդ ,10-րդ ,11-րդ կետերով և 18-րդ կետի դ) ենթակետով, ՀՀ կառավարության 2005 թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի դ) ենթակետով՝ որոշում եմ.

1.Ճանաչել օրինական Ռաֆֆի Ռազմիգ Պետրոսի Քոջյանին սեփականության իրավունքով պատկանող/ծածկագիր՝ 06-004-0015-0001/,այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը չխախտող,քաղաքացիների կյանքին առողջությանը վտանգ չսպառնացող,առանց քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումների իրականացված և հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք չառաջացնող Թումանյան քաղաքի Կենտրոնական փողոցի թիվ 4 հասցեում գտնվող հասարակական բաղնիքում ինքնակամ իրականացված ձևափոխումները՝կառուցված 40,5քմ.մակերեսով միջնորմ և 3 հատ դուռ և պատուհան:

2.Ռաֆֆի Ռազմիգ Պետրոսի Քոջյանին՝ համայնքապետարանի 900265123407 հաշվեհամարին վճարել 29400 /քսանինը հազար չորս հարյուր դրամ/,որից պատուհանների և դռների օրինականացման համար՝ 1050 /հազար հիսուն/ դրամ և ինքնակամ կառուցված միջնորմերի համար՝ 28350 /քսանութ հազար երեք հարյուր հիսուն/ դրամ:Վերջիններիս մուծման անդորրագրերը սույն որոշման անբաժանելի մասն են,գումարը 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում սույն որոշումը կհամարվի ուժը կորցրած:

3.Փոխել Թումանյան քաղաքի Կենտրոնական փողոցի թիվ 4 հասցեում գտնվող 215.8քմ հասարակական բաղնիքի գործառնական նշանակությունը՝որպես հասարակական գործառնական շինություն՝հյուրատան:

4.Համայնքի կադաստրային քարտեզում շինության զբաղեցրած հողամասի գործառնական նշանակությունը բնակավայրերի այլ հողատարածքներից փոխադրել բնակավայրերի հասարակական կառուցապատման:

5.Համայնքի կադաստրային քարտեզում /ծածկագիր՝06-004-0015-001/հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը հաստատել բնակավայրերի հասարակական կառուցապատման:

6.Համայնքի հողային հաշվեկշռում կատարել համապատասխան փոփոխություն:

7.Սույն որոշման 3-րդ կետում նշված գույքին տրամադրել նոր փոստային հասցե՝ՀՀ Լոռու մարզ, Թումանյան համայնք,ք.Թումանյան Կենտրոնական փողոցի թիվ 4 հյուրատուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ՝ ՏԻԳՐԱՆ ՄԽԻԹԱՐՅԱՆ

2021թ. օգոստոսի 03
ք.Թումանյան